մարվել և ընդհակառակն, եթէ որ և իցէ պատճառով (իսկ նոքա չատ անեան են լինում) նա փոխել է իր կրօնը, նա կարող է զարձեալ հայ մնալ, միայն թէ նա իր լեզուն չը կորցնէ, մենք ի հարկէ այժմ չենք հանդիպի վերոյ վիչած փաստերի նմանների։ Եւ երբ հայոց լեզուն, ճանաչելով իր արժրացած պարտաւորութիւնները զէպի հայոց ազգը, սկսում է տարածել ազգայնութեան գաղափարները, ամենևին չը դիպչելով կրօնին, երբ, ասում ենք մենք, մի հայոց լրագիր ասում է հայն, թէ դու ոչ թէ նորա համար ես հայ, որ հայոց եկեղեցու զաւակն ես (այսինքն լուսաւորչական ես), այլ նորա համար, որ դու ունես քո ցեղական յատկութիւնները, քո կենդանի լեզուն, քո ազգային յատկութիւնները, անցեալը, հայրենիքը, և այլն և այլն,—գոնվում են մարդիկ, որոնք համարձակվում են յարձակվել նորա վրա։ կարծում ենք «Վերուժ» առաջնորդող յօդուածները, կարդացէք նորա զանազան թղթակցութիւնները կարսից և այլ տեղերից,—ամեն տեղ դուք մի և նոյն բանի էք հանդիպում.

Այս ինչ հայ, ասում է կարսի թղթակիցը, հրաժարվում էր հայութիւնից, բայց մի և նոյն ժամանակ մարում հայերէն էր խօսում, իսկ այս ինչ ծերունին, որը մոռացել էր իր լեզուն, ամրողջ իր կեանքում երեք անգամ պատրաստ էր լսել և կորցնելով իր լեզուն, պահպանել էր հայութիւնը։ Դարձեալ ա. թիֆլիցը ուզում է իբրև փաստ յառաջացնել, որ ոչ թէ լեզուն, այլ եկեղեցին պահպանելով, կարելի է հայութիւն պահպանել։ Այդ անակնկալից է նայում ամբոխը և այդ է եղել այն տխրալի երևոյթների պատճառը, որ ամբողջ գիւղեր, փոխելով կրօնը, երևակայել են, որ նոքա էլ հայ չեն և հետզհետէ օտարացել են։

Ամեն մինիէ հայը հայ չէր, երբ նա կրապատ էր, ասում է հայոց ազգային չաներ ճանաչող լրագիրը, մինէ նա այն ժամանակ պակաս էր սրտում իր ազգը....

Ներեցէք, որ ամենևին ակամայ խօսեցայ մի հարցի վրա, որից, երևի, դուք արդէն զզուել էք և ինչ անես. մարդը չէ կարող լռել, երբ տեսնում է. որ ամենաառարկան մտքեր չը հանկցողները ուզում են վնասակար գաղափարներ ասելի և ասելի տարածել մեր ազգի մէջ. կարծես այդ մտքերից քիչ է վնասվել ազգը....

Երևի, դուք հետաքրքրվում էք Սիվի կեանքով, Սիվի, որը ունի 135—140 տղայ բնակիչ և որը համարվում է Ռուսաստանի բոլոր քաղաքների «մարդու» կախաւանի փոքր ի չատէ ծանօթացնել ձեզ նորա հետ։

Այս անգին քաղաքում, որ ունի համալսարան իր 8—9 հազար ուսանողներով, անթիւ պրոֆեսորներով, հրատարակվում են միայն „Кіевскій листокъ объявленій“ և մի ողորմելի „Кіевлянинъ“ լրագիրը, որը միայն պարապում է հրէաներին հալածելով. Համալսարանը ունի իր օրգանը „Университ. извѣстія“ Ահա մասուր չարժամը Սիվի, որ ամբողջ փոքր-Ռուսաստանի կենտրոն է։

Այստեղ թատերասէրները հիմնել են ռուսաց դրամատիկական ընկերութիւն։ Այս ընկերութեան անդամները ամեն չաբաթ մի մի ներկայացումն են տալիս թիֆլիսեցի հայը ի հարկէ կը զարմանայ, երբ կը լսէ, որ այս խումբը տալիս է իր ներկայացումները տեղական երաժշտական ուսումնարանի փորրիկ դահլիճում, չը նայելով, որ կայ մի քաղաքային և մէկ էլ բանակային մեծ համալսար (Բէզբոդնկ) թատրոն։ Այս խումբը ամեն ձեռնտու է համարել տալ իր ներկայացումները փոքր դահլիճում, և երբ որ և իցէ ներկայացման տոմսակները բոլորովին ծախվում են, իսկ չանկացողները չատ են լինում, մի և նոյն պիեսան կրկնում են, և չաբաթը փոխանակ մի ներկայացումն տալու, երկուսն են տալիս. Յամայի է միայն, որ ա. պ. թատերասէրները աչխատում են այնպիսի ժողովրդական (народная) դրամաներ ներկայացնել, որպիսին է ա֊թշուառ վիճակ (Горькая судьбина), որոնք միայն պատմական նշանակութիւն կարող են ունենալ։ Թատերասէրների մէջ կան մի քանիները, որոնք հետևութեամբ կարող են մրցել ռուսաց լաւ դերասանների հետ։

Այստեղի կեանքի միւս երևոյթները ևաղիս թէ կարող են ձեզ հետաքրքրել։

Մ֊րզա

ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅ

—

31 յուլիսի

Յուլիսի 17-ին Հին֊Նախիջևանի զաւառի թուխրուլ գիւղում վախճանվեցաւ տեղացի ևաչալ Շահնազարանց. Հանգուցեալը գաղթական էր Պարսկաստանի Սալմաստ գաւառից, 50 տարի առաջ այնտեղ եկած. Ժառանգներ չունենալու պատճառով նա իր հարստութեան մի նշանաւոր մասը կտակից զանազան ազգային հիմնարկութիւններին բարեգործական նպատակով, իսկ մնացածը թոռնից իր հեռաւոր և մերձաւոր ազգականներին։

Ազգային հիմնարկութիւններին կատակ գտնվածները հետևեալներն են՝ 5000 ր. Թողած է Նախիջևանի հոգևոր դպրոցին այն պայմանով, որ միչեալ դպրոցը հանգուցեալի անունով կոչվի Շահնազարեան։ Յոյս կայ, որ նախիջևանցիք կը կատարեն հանգուցեալի փափագը, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այդ գումարը կարող է ներքնից դպրոցին կրկին կեանք տալ, որը արդէն մահուան վիճակի մէջ էր իր նիւթական չքաւորութեան պատճառով. 3000 ր. կտակել է երեսունհնգամյա սուրբ Ցակոբայ վանքի դպրոցին, իսկ 100 ր. Էջմիածնայ վանքին։

Հանգուցեալը թէև անգրագէտ մարդ էր, բայց սաստիկ սէր ունէր դէպի ուսումը և հայ մանուկների կրթութիւնը։ Նրա այդ առաքինական ձգտումները ի նկատի ունենալով, յուլիսի 10-ին մեր գիւղի ծխական դպրոցի հոգաբարձուները, մի քանի ազնուական անձինքների հետ, գիմեցին Բագու Շահնազարեանի մօտ, խնդրելով, որ նա մի նուէր ևս անէ մեր գիւղի դպրոցին։ Այնտեղ ներկայ էր հանգուցեալի զաւակը կամակատար տէր-Աննան ատաղ քահանան և այս տողերի գրողը։ Հանգուցեալը սիրով ընդունեց հոգաբարձուների խնդիրքը և նշանակից իր տարատեսչութեից 2500 ր. Թումբուլի ծխական դպրոցին տալ Նոյն րոպէում ատանին թուղթ գրվեցաւ, և ներկայ եղող բոլոր անձինքը ստորագրեցին, և թղթի մէջ յատուկ պարագ էր գրվում կամակատար տէր Աննան ատաղ քահանայի և նախիջևանցի մահտեսի Սահակն Ղարահանեանցի վրա, որ սրբութեամբ կատարեն նրա վերջին որոշումները. 2500 ր. մեր գիւղի զըպրոցին տալով.

Դպրոցի հոգաբարձութիւնը, հաւատացած լինելով, որ հանգուցեալի կամքը ճշդութեամբ կը կատարվի, ձեռնարկից դպրոցի համար մի նոր չէնք չհիմել. Հինքը ձգեցին, ի հարկէ, յուսացած գումարով կարելի էր մի բաւական վայելուչ չէնք ունենալ. և տէր Աննան ատաղ քահանան յորդորում էր ամբողջապէս ևեփած ագիւռներով չինել.... Բայց գաւաղի է տևնել, այժմ տէր Տալբը, որ հանգուցեալի գլխաւոր կամակատարներից մէկն է և մեր գիւղի ատաղ քահանան, բոլորովին ուռն է անտարբեր կերպով է նայում դէպի միչեալ հիմնարկութիւնը. Արդեօք պատճառն ինչ է,—ևս այժմ ասել չեմ կարող, միայն յոյս ունեմ, որ տէր Տալբը այնքան բարի կը լինի, որ չի թողնի հանգուցեալի կտակը անկատար միալ, որով նա մի մեծ բարիք է արել մեր գիւղի մանուկներին, որոնք ուսման և կրթութեան չատ ու չատ կարօտ են։

Վերջացնելով նամակս, հարկաւոր եմ համարում յիշել, որ մինչև այսօր առհասարակ հանգուցեալի կտակի կէսերից ոչ մէկը իր նպատակին չէ հասած։ Արդեօք երբ պիտի կատարվին, այդ մասին Թող պատասխանեն այն անձինքը, որոնց վրա պարտաւորութիւն է դրած կատարել բարեպաշտակ հանգուցեալի կամքը։

Սիմէոն քահանայ Տէր-Մտեփաննեանց

ՆԱՄԱԿ ԴՈՒՐԱՑԻՑ

—

Օգոստոսի 5

Սովորաբար ամենայն տարի տերևները բացվելուց յետոյ, մեր գաւառում սկսվում են կատարվել տարատեսակ մարզասպանութիւններ և ուտազութիւններ։ Մարզասպանութիւնները ըստ մեծի մասին ծագում են արհեստաբար վրէժխնդրութեան զգացմունքներից, իսկ ինչ վերաբերում է կռղոպտուններին և զանազան գողութիւններին, սրանց թիչը բնաւ չէ պակասում, եթէ մինչև չէ աւելանում. Սակայն չատ ժամանակ էր ինչ որ ասպանների համարձակութիւնը չէր հասել այն չափազանութեան, որ օրը ցերեկով կողոպտէին փոստի ձիաներով գնացողներին, ինչպես այս երկու վերջի տարիներ։ Անցեալ տարի Նիժնինովգորոդի ծուխաձառ մի գնացողից յափշտակեցին 9 հազար րուբլի, թէպէտ և այս տարի էլ չարագործները դիտատրութիւն ունէին նոյնպես վարվել վաճառականների հետ, բայց այս վերջինները այս անգամ խորամանկութեամբ էին թագցրել իրանց փողերը, որ ոչ ոք չէր կարող ենթադրել, թէ նրանց բարձերը պարունակում են իրանց մէջ հազարներ, այնպէս որ ասպանները ստիպված էին բաւականանալ վաճառականների ժամացոյցներով և 70 րուբլի փողով։

Ես կարծում եմ, որ այսեղ աւելորդ կը լինէր չարունակել ասպանների չարագործութիւնների մանրամասն նկարագրութիւնը, միայն այն հանգամանքը, որ անհերքելի փաստը, որ օրը ցերեկով կողոպտում են արշուեի ճանապարհների վրա, պարզ կարող է ապացուցանել, թէ որպիսի զըրկանքների և վտանգի են ենթարկված միւս ոչ ապահովված ճանապարհներով գնացողները. Այս ճանապարհների վրա գրեթէ ամենայն օր լինում են ողբալի անցքեր, որոնցից տասից մէկը հազիւ է յայտնվում ոստիկանութեան. Բայց գլխաւոր քանը բռնադատվում է այն տխուր հանգամանքի մէջ, որ ասպանների սատկանալը, բացի նրանից որ ընդհանրապէս վնասում է գիւղա-տնտեսական և վաճառականութեան գործի ծաղկելուն, մանաւանդ չափազանց վնասներ ազդեցութիւն ունի ինչպես գաւառի բնակիչների բարօրութեան վրա, նոյնպէս և քաղաքի վաճառականցի վրա, որի հարուստ և առատ դիրքից կախումն ունի քաղաքացիների դիւրագին կենցաղավարութիւնը. Այնպէս որ նկատած է, այն տարի, երբ ասպանները զօրանում են գաւառում, այն ժամանակ քաղաքում գործերի և միւս մթերքների գները մեծապէս բարձր են կանգնած, քան թէ այն տարի, երբ գաւառը խաղաղ է։ Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ գիւղացիք, տեսնելով անձնական և կեանքի ապահովութեան բացակայութիւնը, չեն վճռանում յաճախ բերել ծախելու իրանց բերքը, որովհետև նրանց չատ լաւ յայտնի է, որ նթէ վերադառնալու լինեն գիւղը փողով, կամ գնած իրերով, նրանց խոյտն կը կողոպտեն, իսկ ի դէպս ընդդիմադիրների կը սպանվին. Վերջապէս փախըտական—աւազակների երեսը մեծապէս նպաստում է գանազան գողութիւնների և կողոպտումների միւը բազմացնելուն և այս գարձեալ յայն պատճառով, որ փախստական—աւազակների հետ հասարակ գողեր էլ են խառնվում, կամ փախստականների տեղական իրանք են կատարում չարագործութիւններ։ Ահա որպիսի տխուր, անխախտելի գրութեան մէջ է գտնվում մեր գաւառը։

* * *

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Բագդադից։

Անցնելով Պարսկաստանից, ուր ես մօտ չհինգ ամրի է չեմ նըել, ես նրա մէջ նկատեցի ուրախալի քաղաքացիութեան հետևքեր։ Այդ փաստը ասելի էլ աչքի է ընկնում մեծ քաղաքների մէջ։ Օրինակ Թէհրանը ևւրոպական մեծ քաղաքի տեսք է ստացել։

Պարսկական իշխանութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեց եւրոպական նաւերին, որոնք բերել են իրանց հայրենիքի ապրանքները և որոնց յանձնված էր առևտրական առաջին փորձն անել Պարսկաստանի հետ։ Ասում են, որ պարսկական և եւրոպական կառավարութիւնները մտադիր են առևտրական դաշնակցութիւն կապել։ Առհասարակ պարսկական կառավարութիւնը բոլոր միջոցները գործ է դնում երկրի առևտուրը կենդանացնելու համար, բայց ապրարդարար այս սարի պարսկական միլիարդների բոլոր ուշադրութիւնը գաթձած էր հիւսիսային նահանգների վրա, մանաւանդ Ազրբէջանում տարածված սարսափելի սովի վրա։ Ես ինքս նկատեցի, որ Ռուխտաեան սահմաններից սկսած մինչև Թէհրան ուտեստի պակասութիւնը վճռորն ստիճանի էր հասել և թէպէտ կառավարութիւնը ամենահագատու միջոցներ էր գործ գնում սովի առաջն առնելու համար, սրեւէ ամենայնիւ ապարդիւնութիւնը հարիւրներով սովամահ էր լինում։

Բնակչութեան ես Բագդաղ ուղևորվելիցի, որտեղի թիւրքաց նահանգապետը անհամ գտոտնեմամ մի քանի գունդ հրաձգիներ էր պատրաստում ապստամբված արաբների դէմ ուղղելու համար։ Ապստամբութեան պատճառը, ինչպես ես տեղեկացայ, թիւրքաց վարչութեան անարդար վարմունքն է եղել։

Ես մտայրել եմ այցելել Ամիրանիստանի նոր էմիր Արդուրահմանխանին, որի հետ մի անգամ տեսնվել եմ։ Ինչպես ես նկատեցի Թէհրանի մէջ Արդուրահմանին բոլորովին չեն համակրում։ Պարսկական բարձրաստիճան անձինք նրան ուսում հատուածում են Հասմարում։ Գենեռալ Սկոբելիի գնացքը դէպի Թիւրքմենների անապատները անբնականութիւն է պատճառում պարսկաստանցիներին։ Այստեղ ասում են, որ Հերատը այդ չարժման պատճառով վտանգի է ենթարկվում։ Ես կարծում եմ, որ այդ բոլորը հետևած է նրա համար, որ պարսկական կառավարութիւնը միջոց ունենայ բանակցել անգլիական դեսպանատան յետ Թէհրանի մէջ Հերատը Պարսկաստանի հետ միացնելու մասին։ Պարսկական կառավարութիւնը անպատճառ կանվնում է իրագործել իր այդ դիտաւորութիւնը։

ԱՅԳԱՆԻՍՏԱՆ

—

«Times» լրագրին գրում են հետևեալը օգոստոսի 15-ից։

Մինչև այժմ անգլիական զօրքերի գործ գալը Կաբուլից կատարվում էր Հանգիստ և կարգով։ Զօրքերի գնացը մի քանի անչափութիւնների և դժուարութիւնների էր պատճառում, բայց ապրարդարութիւնը նրանց հետ բարկանալը էր վտանգում։ Բնակիչները հնազանդութիւնը և մեծ չափազանց մեծ են։ Զօրքերը ուրախ են, որ Հնդկաստան են վերադառնում և այդ պատճառով առանց պատրաստ ուտեստ են ճանապարհորդութեան դժուարութիւնը։ Երեկ օրից յետոյ զօրքերը Գանդամակ կը հասնեն, որտեղ մի փոքր կը հանգստանան։ Ճետոյ նրանք կանցնեն Ջալալաբադից։ Այդ գնացքը չափազանց դժուար էր լինի սասկի շոգերի պատճառով։ Բացառապես Պենջաբի մէջ խօլերա չը կայ և զօրքերը նրանից չեն վնասվի։ Մի քանիսը կարծում են, որ ասելի լաւ կը լինէր Գանդամակի մէջ երկար ժամանակ մնալ մինչև շոգերը անցնեն և նոր էմիրն էլ Կաբուլի մէջ իրան ասելի ապահով զգայ։ Գենեռալ Սաֆրաթ կամենում է անպատճառ հետևանալ, որովհետև ուտեստի պահասութիւնը երկրի մէջ կատարելի զգալի է գառնում։ Բանակիրը այնպէս կիզուռ են և զօրքերը այնքան չատ աշխատանք ունեն, որ նրանց հետևանքը ցանկալի է, եթէ ի նկատի առնենք առողջապահական պայմանները։ Բնակիչները Հանդիսա են և դէպի անգլիական զօրքերը բարեկամաբար են վերաբերվում։ Էմիրը ցանկանում է, որ անգլիական զօրքերը գոնե ժամանակաւորապէս մնային և նրան օգնէին։

Վերոհիշեալ նոյն լրագիրն գրում է՝

Կանդամարից ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ ամեն բան Հանգիստ է և պաշտպանության աշխատանքները վերջացած են։ Էյուբ֊խանի զօրքերը պատրաստ են քաղաքը։ Կանդահարի մէջ և դաղած անգլիական զօրքերը թէ ուտեստ և թէ պատերազմական պարագաներ առատապէս ունեն։ Ասում են, որ Էյուբ֊խանի զօրքերի մի մասը ապստամբվել է։ Տեղացիներից անգլիացիների դէմ ապստամբել են միայն Կանդահարի շրջակաների բնակիչները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի։ Աչտօր ուղևորվեցաւ դէպի Թիֆլիս գվարդիական հեծելազօր գունդի երկրորդ բատարէյի պատգամաւորութիւնը շնորհաւորելու համար Գեներալ֊Թէլդյէչլիախտերին, օգոստոսի 29-ին լրանալու քան և հինգ ամեայ ատրճաթրը Նրա այդ բատարէյի շէֆի Նշանակվելուն։

ՇԱՄԱՆ, 21 օգոստոսի։ Լուր կայ, որ Էյուբ անարգել առաջ գնալու Թոյլատրութիւն խնդրից։ Ենթադրում են, որ նա Կաբուլ գնալու դիտաւորութիւն ունի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 բ., երկրորդ 92 բ. 37 կ., երրորդ 93 բ. 50 կ., չորրորդ 92 բ. 50 կ., երեքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 223 բ. 50 կ., երկրորդ 221 բ. 75 կ., արևելեան առաջին 91 բ. 12 կ., երկրորդ 91 բ. 25 կ., երրորդ 91 բ. 25 կ., ոսկի 7 բ. 84 կ.։ Ռուսաց 1 բուլ Լոնդոնի վրա արժէ 25,09 պենս, ռուսաց 100 բուլ Համբուրգի վրա արժէ 215 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 265 ֆր. 25 սանտ.։ Բօրսայի տրամադրութիւնը Հանգիստ է։

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ